


«ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1892

ԹԻՒ 9



ՔԻԼՐՆԻ ԼԻՃԵՐԸ

Մարդ չկրնար նայիլ այս պատկերին վրայ առանց զգալու թէ յոյժ գեղեցիկ է ներկայացուած տեղը: Իռլանտայի հարաւային արևմտեան անկեան մօտ կը գտնուի երեք լիճերու շարք մը՝ լեւանց մէջ որք գրեթէ մինչև իրենց գագաթը ծածկուած են ծառերով և թուփերով: Վերի լիճը երկու քուկէս մղոն երկայնութիւն ունի և կը պարունակէ տասներկու փոքր

ՔԻԼՐՆԻ ԼԻՃԵՐԸ ՄԻՆ

կղզիներ, և ահա լին այս տեղն է զոր պատկերահանը կը շուրջէ հաս մեզ: Քիչ մը երեւակայելով կրնանք տեսնել տերևներուն սյլ և սյլ աստիճանի կանաչ զոյները և լսել փոքրիկ վտակներուն կարկաչը մինչ լեռներէն կ'իջնեն վար: Այս է զբօսաշրջիկներու շատ հաճելի տեղ մը: Մէկ կողմը կը տեսնուին աւերակները Մըքրոս Աբբայարանի որ կառուցուեցաւ 400 կամ 500 տարի առաջ: Միջին և ստորին

լճաց մէջտեղ գտնուող պարանոցին վրայ կը տեսնուին աւերակները Ռոս Դոյեկին որ է հին ամրոց իբր հազար տարուան: Լեւանց մին, որ կը կառուի Արծաւոյ Բոյն և օլղաբերձ (քէ) կը բարձրանայ վերին լճէն, հոչակաւոր է իւր արձագանդին համար: կը գտնուին նաւակներ որովք զբօսաշրջիկք ստակ վճարելով կը պտրտին կողմէ կողմ և մէկ սքանչելի տեղէն միւսը: Հին կամուրջի մը ներքև արագասահ ջրին վրայէն նաւարկելու զբօսանքը կայ:

նաւարկութիւնը ապահովապէս կը կուտարուի փորձ նաւավարներու ձեռքով:

Եթէ կարող լինէինք այցելել այդ տեղը, մենք ևս պիտի զգայինք թէ այդ է ուրիշ մը այն գեղեցիկ տեղերէն որովք Աստուած զարդարած է աշխարհս: Ո՛րչափ շատ այսպիսի տեղեր կան:

Բ Փ Ս Ա Լ Ա

Սթոքհոլմի հիւսիսային կողմը և անկէքառասունուերկու մղոն հեռի կ'ընայ Բփալա, Շուեաի նախկին մայրաքաղաքը: Հազար տարի առաջ համբա-

ղաւորներէն մին, ևս թաղուած է հոն, նաև լինէնոս համբաւաւոր բուսարանը, որոյ պատկերը դրինք Տշայոց Ա. ետաբերի նախորդ թիւերէն միոյն մէջ: Շուեաի արքեպիսկոպոսը կը նստի յԲփալա:

Բայց Բփալա իւր զլիսուսը համբաւը կը պարտի իւր Համալսարանին որ հիմնուեցաւ 1477 ին: Խորհրդարանը կը հայթայթէ Համալսարանին եկամտին իբր կէսը: 1889 ին հոն կը գտնուէին 1,791 ուսանողք և 58 փրոֆէսորք և 61 օգնական փրոֆէսորք: Համալսարանին մատենադարանը կը պարունակէ 250,000 հատոր գիրք և

մինչ կամայ կամայ կը քայլէ: Խեղճ Յոննիկ, շատ դժուար բան էր այս իրեն համար: Երբեմն դրացիք կ'ըսէին, երբ նա կը քայլէր կաղալով, «Սհա կ'երթայ խեղճ Յոննիկը իւր երկաթ կոշիկով: Ի՞նչ անդու թէ մայրը որ կը հագցունէ այդ կոշիկը մինչ Յոննիկ երբեք չուզէր:»

Յոննիկ երբեմն կ'երթար իւր մօր և կ'ըսէր, «Կ'աղաչեմ, մայրիկ, սա երկաթ կոշիկն հանէ ոտքես: Շատ դժուար է զայն գործածել, գրեթէ կը մեռցունէ զիս: Ես հոգ չեմ ընէր եթէ կաղ ըլլամ, հոգ չեմ ընէր եթէ սաքիս կոճը դուրս անկուի, հոգ չեմ ընէր թէ ինչպէս պիտի ըլլամ երբ մեծնամ. բոլոր փափաքս այն է որ սա կոշիկն հանես ոտքես:» Յոննիկ շատ նշողութիւն կու տար իւր մօր և կը ձանձրացունէր զնա իւր սուրտունջներով, իբր թէ մայրը այդ կոշիկը անոր ոտքն անցուցած ըլլար զնա չարչարելու համար: Բայց այդպէս չէր բանը: Երկաթ կոշիկը անհրաժեշտ էր տղային սրունքը հաստատ պահելու համար, մինչև որ ոսկրները զօրանային և առողջանային: Բայց Յոննիկ հաւատք չունէր այդ մասին: Չէր համոզուած թէ այդ կոշիկը որ և իցէ օգուտ պիտի ընէր իւր սաքին: Փոխանակ վատահելու իւր մօր և բժշկին՝ ամէն ժամանակ կը գտնուէր և գլուխ կը ցուցունէր:



Բ Փ Ս Ա Լ Ա

40,000 ձեռագիր. և օրէնքով իրաւունք ունի մէկ մէկ օրինակ ձրի ստանալ ի Շուէա տպագրուած իւրաքանչիւր գիրքէ:

ԵՐԿԱԹ ԿՕՇԻԿԸ

Յոննիկ ախտ մը ունէր իւր սաքին վրայ: Անոր ոտից և կոճերուն ոսկրները կը կակղնային, այնպէս որ կը ծռէին և կը թանձրանային երբ կը քայլէր: Իւր մայրը առաւ զնա և բժշկին տալու դարմանելու համար: Բժշկին ըսաւ մօրը որ երկաթէ կոշիկ մը շինել տայ տղային սաքին համար և տարի մը ամէն օր հագցունէ զայն: Շինուեցաւ կոշիկը և տղան հագաւ զայն: Բայց շատ տգեղ և անհաճոյ էր այն և կը ցուցունէր Յոննիկի ոտքը: Խորհեցէք փոքրիկ տղայի մը կակուղ, փափուկ ոտքին անցուած կարծր երկաթէ կոշիկն վրայ: Նա այդ կոշիկով ո՛չ կըրնար վազել և ո՛չ ցատկել, այլ միայն կրնար քաշել զայն դժուարութեամբ


Տիկին մը որ կը բնակէր նոյն տան մէջ և ձանձրացած էր լսելով տղային տրտունջները և զանգատները, բնաւ որ մը Յոննիկին մօրը, «Ինչո՞ւ համար կոշիկը չես հաներ տղային սաքին և թողուր որ ինք կրէ հետեանքը: Եթէ ես ըլլայի, կը հանէի:»

Մայրը վշտացաւ այս խօսքին վրայ: Նա խանդակաթ սիրով կը նայէր իւր փոքրիկ տղային վրայ, և շոյելով անոր գլուխը ըսաւ, «Ես պարտիմ ընել իմ զաւակիս համար ոչ թէ ինչ որ հաճելի է, այլ ինչ որ օգտակար է անոր՝ ապագային համար: Յոննիկ օր մը շնորհակալ պիտի ըլլայ ինձ այժմ իրեն ըրածիս համար: Եթէ այսպիսի չխորհէր անոր վրայ, այսքան դժուար պիտի չըլլար կրելը: Շատ բաներ ունի զինք հանգիստ և երջանիկ ընող, թէպէտ երկաթ կոշիկ հագած է, և սա պիտի չտէն երկար:»

Յոննիկ վար կախեց իւր գլուխը: Անցաւ: Գիտէր թէ իւր մայրն ո՛րչափ

ուսոր էր իւր հեթանոսական շքեղ տաճարին համար, որ կը չողողար ոսկով: Քաղաքէն երեք մղոն հեռի կը գտնուին երեք ահագին արհեստական բլուրներ որ ծանօթ են իբրև գերեզմանք երեք թագաւորաց և որոց թուականը կը հասնի հեթանոսական հին օրերուն: Առաջին քրիստոնէական մայր եկեղեցին շինուեցաւ հոն իբր 1100 ին: Նա հոյ ճարակ ըլլալով՝ անոր անդ շինուեցաւ այժմու մայր եկեղեցին որ կը ցուցուի պատկերին մէջ և որոյ շինութիւնն աւարտեցաւ 1435 ին: Կը պարունակէ հետաքրքրաշարժ շատ մը մահարձաններ: Կ'ըսուի թէ անոնցմէ միոյն մէջ ամփոփուած են ոսկերուտիքն Էրեք Թ. Ի, Շուեաի պաշտպան սուրբին, որ մեռաւ 1160 ին: Կոսթա վոս վազա, Շուեաի մեծագոյն թա-

բաներ կ'ընէր իրեն համար ամէն ա-
տեն, և մինչև իսկ այդ երկաթ կոչի-
կը իւր օգտին համար էր: Ի վերջոյ
անցաւ յաւազին փորձառութեան այն
տարին: Ախար բժշկուեցաւ: Եր-
կաթ կոչիկը հանուեցաւ ոտքէն: Յոն-
նիկ մեծցաւ և եղաւ բարձրահասակ,
գեղեցիկ երիտասարդ մը, ուղիղ և
զօրաւոր սրունքներով և հաստատուն,
արագ քարուածքով: Եւ ի՞նչ կը կարծէք
թէ երբեմն կ'ընէր իւր մօր: Խիստ շատ
անգամ բազուկներուն մէջ կ'առնուր
իւր մօր պարանոցը և կ'ըսէր, «Մ'հ, մայր,
ի՞նչպէս շնորհակալ ըլլամ քեզ այդ
երկաթ կոչիկն ինձ հազցուեցուց հա-
մար: Այդ է ամենէն աղէկ բանը որ
երբեք ըրած ես ինձ համար: Եթէ
այդ կոչիկը չըլլար, բոլոր կենացս մէջ
պիտի ըլլայի խեղճ խեղանգամ մը:»
Ահա կը տեսնէք թէ Յոննիկի նեղու-
թիւններն ինչպէս եղան օրհնութիւն
անոր: Ճիշդ նոյն կերպով մեր մէն մի
փորձանքը իբր թէ երկաթ կոչիկ մըն
է զոր կը հազցունէ մեզ մեր Երկնասր
Հայրը: Չորանջներ, չգանգ ատինք ա-
նոր համար, այլ տանինք համբերու-
թեամբ, վասն զի կրնանք վստահ լի-
նել թէ Աստուծոյ նպատակն է զայն
ընել մեզ բարիք և օրհնութիւն որ և
իցէ կերպով:



ՇՐՋԱՆԱԿ ԳՂՈՐԵԼ

Մենք բժիշկ չենք և երբեք չհետե-
ւեցանք բժշկականութեան, բայց գի-
տենք թէ ինչ բաներ յոյժ օգտակար
են մանչերն և աղջիկները զօրաւոր ը-
նելու և անոնց աղաւ համար կարմիր
այտեր և լաւ ախորժակ: Կ'ուզէ՞ք
առնուլ մեր դեղէն: Այն ոչ +ըն+
է, ոչ հնդկիւղ և ոչ երկաթախառն
օշարակ. չունի ատոնց նման անա-
խորժ համ: Բայց կարծեմ մանչերու
և աղջկանց մեծ մասը շատ կը սիրեն
զայն: Մեր դեղն է առաջ մարմնամարդ
Բոյ օրոյն ձեռք: Հարկաւ դուք քանի մը
ժամ անցունել պարտիք դպրոցին մէջ,
նաև պարտիք պատրաստ ըլլալ տան
մէջ օգնել ձեր կարողութեան չափով
ձեր մայրերուն երբ ձեզ պէտք կայ,
բայց զանց մի ընէք բաց օդոյ մէջ
մարմնամարդը: Ահա հոս կը տեսնէք
փոքրիկ աղջիկ մը որ առած է այն դե-
ղէն, և կը գրծօճու գլորելով իւր շեր-
ջանակը: Նոյնիք անոր վրայ մինչ կը
կենայ հանգչելու համար, Տեսէք, ի՞նչ
զէր են անոր երեսը և բազուկները,
և ի՞նչ ախորժակով պիտի ճաշէ երբ
կու գայ ճաշին ժամը:

Անուշա կը գտնուին տղայք որ կալ

են կամ տկար և չեն կրնար վազել և
ուրիշ զօրացուցիչ զբօսանքներով զբա-
ղիւ: Յոյնները անոնց շատ սէր և հա-
մակրութիւն, և շնորհակալ ըլլանք որ
Աստուծոյ արուած է մեզ առողջու-
թիւն և ոյժ:



ԶՈՒԻՑԵՐԱՅԻՔ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ
ՉՈՐ ԽՈՏ

Գիւրին չէ չոր խոտ պատրաստել
արեգական ջերմ ճառագայթից ներ-

(«Ինչպէս») են որ արջառք չեն կրնար
արածիլ անոնց վրայ. և այս փոքրիկ
խոտի դաշտերն են ուր կանայք չոր
խոտ կը պատրաստեն ամառուան եր-
կայն օրերուն մէջ: Կառք չկրնար ելլել
այդ տեղերը՝ եթէ ուզուէր իսկ կառք
գործածել, և ուստի հարկ է որ խոտը
ահագին խուրձերով վար իջուցնեն այդ
մարդիկ իրենց զօրաւոր ուսերուն վրայ
առած զայն. նաև հարկ է ունենալ
ուժեղ գլուխ և հաստատուն ոտք որ



ՇՐՋԱՆԱԿ ԳՂՈՐՈՂ ԱՂՋԻԿ

քե Զուիցերիոյ լեռներուն մէջ, ինչ
պէս կրնան վկայել այդ երկրին գիւ-
ղացի կանայք որ սաստիկ կ'աշխատին
այդ գործով: Մինչ այդ մարդիկ ըզ-
բաղեալ են իրենց հօտերը արածե-
լով բարձր լեռանց կողերուն վրայ
գտնուող մարդագ ետիներուն մէջ, ա-
նոնց կիները կը պատրաստեն չոր խո-
տը զորաւ ձմեռուան համար, երբ խոտը
ձիւնը կը մնայ լեռներուն վրայ և հօ-
տերը և արջառոց երամակները պէտք
ունին պատապարուելու և կերակրուե-
լու:

Կարենան դառնալ սեպացեալ ժայռից
չուրջը և սոսկալի գահալէժներուն ե-
ղերաց վրայ այդպիսի բեռնով: Այնու-
հետե խոտի խուրձերը կը շարեն խաչ-
նարածներուն բնակարանին վերի մա-
սին մէջ. և երբ ձմեռը կու գայ անա-
սունք կը գրաւ են անակին ամենէն ցած
յարկը, և ընտանիքը՝ անոր վրայի յար-
կը, և այս անակն է թէ՛ բնակարան
և թէ՛ երկրագործութեան շէնք:

Զուիցերիոյ բազում հովիտներուն
մէջ երկրագործութիւնը չէ քաջալե-
րական, վասն զի յանկարծ կրնայ ձիւ-
նակոյտ մը վար գլորիլ և կորուսանել
տարուան բոլոր արդիւնքը: Բայց և

Լեռանց կողերուն վրայ փոքրիկ կանայ
մասեր կան, որք այնպէս զաւ ի թափ

այնպէս զիւղացիք կը մշակեն իրենց փոքրիկ պարտէզները, և ձմեռուան ցերեկները կ'անցունեն շինելով փայտէ սիրուն քանդակեալ կարասիներ: Արջառոց արօսները ձիւնով կը ծածկուին Հովեմբերէ մինչև Մայիս, բայց երբ ի վերջոյ կու գայ գեղածիւ ծաղ դարունը, ահա հօտք և արջառոց երամակք դուրս կ'արձակուին իւրենց ձմեռնային բանաբէն ազատօրէն վայելել դաշտերն և արօսները: Շատ անգամ զիւղացիք իրենց փառաւորազոյն զգեստներն հագած կը կազմեն թափօր, իրենց հետ ունենալով նուազածուաց խուփ մը նաև գեղեցիկ և մտացի կենդանիներ զանգակներով և ժապաւէններով զարդարուած: Գիւղին երէցը օրհնութիւն կը կարդայ այդ օրը, և անոնք բոլորը կը մեկնին կ'երթան ոլորուն ճամբաներէն որք կ'անցնին լեռնային հասանքներէն, մութ անտառներէն և թերևս ահազին ձիւնապատ դաշտերէն դէպ ի ծաղկալից արօսները: Խաչնարածք կը բնակին լեռանց կողերուն վրայ գանուող փոքրիկ հիւղերու մէջ, մինչ անոնց կանայք և ընտանիք կը մնան վարը: Բանի յառաջ կ'երթայ ամառը, արջառք կը մղուին լեռներէն վեր՝ արօսները: Օրը երկու, երեք անգամ կը կ'իջուին, և բոլոր ամառը կը շարունակուի պանիր շինելու գործը:

ՄԵՐ ՍՈՐՈՑ ՓՈՒՍԱԲԵՆ

Յնցողներ հաղած, աղաոտ և սղ եղողայ մը ինկած էր աղմուտ աղբանոցին մէջ. ձեռու ընները և երեսը սև էին, բերանն էր լայն բացուած, և կը հանէր այլանդակ ձայներ: Հոս ձեռք մը վեր առաւ զնա և տարաւ պատին կրթընցուց: Հոն կեցաւ տղան, իւր արտասուքները առուակներու ձեւով վար կը հասէին աղաով շաղախեալ այսերէն: Անյորդք կը ծիծաղէին վրան, հոգ չընելով հարցնել թէ իրօք վիրաւորուած էր նա: Տղայք կը կայնէին վայրկեան մը, ծաղրելու և նախատելու համար զայն: Եղկելի՛ տղայ, բոլոր աշխարհի վրայ չունէր մէկ բարեկամ մը անգամ զոր ճանչնար: Արդարև ինք բարեկամութիւն վայելելու արժանի չէր: Բայց եթէ միայն արժանաւորք ունենային բարեկամ, որչափ անձինք առանց բարեկամի պիտի մնային:

Տիկին մը կ'անցնի, իւր սրտին բալուրթենէն կը ստիպուի կենալ և խօսք մը վրուցել տղայոց որք կը ծաղրէին իրենց այն ընկերը և կը ծիծաղէին անոյ ցաւերուն վրայ: Յետոյ աչուրները անկամ կը նայի պատին քով կ'իջող աղաոտ աղային վրայ: «Յովհաննէս, դո՞ւն ես», կ'ըսէ:

Տղան իւր սև բռունցքը վեր կ'առնուի իւր աչաց վրայէն. կը ճանչնայ տիկինը: Սա դաս տուած էր իրեն՝ կիրակնօրեայ դպրոցին մէջ:

«Ո՛հ, տիկին, ես շա՛տ գէշ եմ», ըսաւ: Տիկինը հարցափորձ ընելէ ետքը կը տանի զնա հիւանդանոց: Այնուհետև անոր կ'այցելէ սիրով և յաճախ: Կ'անցնի քանի մը տարի: Գիշեր մը հրդեհ կը պատահի. տուն մը բոցերու մէջ է: Չրհանները տակաւին չեն հասած: Տան ներքո գանուողները չեն կրնար փախչիլ: Տղայ մը կը նայի այրող տան վրայ: «Ո՛հ, տիկինը հոն կը բնակի», կ'աղաղակէ իսկոյն, և անմիջապէս վեր կ'իջէ տաքցած և փչելու վտանգին մէջ գրանուող սանդուղէն: Կը մաքառի հեղձուցիչ ծուխին դէմ, կը պարտի և կը փնտռէ ատա և անդ մինչև որ կը գտնէ իւր փնտառը, իւր բարերար տիկինը: Սա նուազած է, մեռնելու վրայ է թերևս: Բայց ոչ. տղան պիտի աղաատէ զնա: Հինգ վայրկեանի տագնապէ ետքը տիկինը ապահով կը գտնուի զով օգին մէջ:

Ներկայ գանուողները կը հիանան աղային քաջութեան վրայ: Նա միայն միմիջեց այն տեղէն մեկնած ժամանակը, «Տիկինը իւր երեսը չէարձուց ինչ երբ ես վիրաւորուած և թշուառ էի»:

Բարեկամք, քարը շատ խորտաբորտ երևոյթ ունի, բայց թերևս ազամանդ է:

ՓԻՂ ԿՅՈՒՆԸ

Իբր երկու հարիւր տարի առաջ Հնդկաստան կը բնակէր Մահաթթա ցեղէն իշխան մը Շահճէ անուն: Կը թուի թէ նա էր իւր ժամանակին աւմենէն դիտուն իշխանը, և անոր խորհուրդը կը հարցուէր միշտ փափուկ խնդիրներու մէջ: Շատ բաներ կը պատմուին անոր տուած իմաստուն վճիռներուն վրայ՝ դժուարութեանց ժամանակ, և անոնցմէ ոմանք յիշուի հետաքրքրաշարժ են:

Մնգամ մը իշխան Շահճէի պալատան բարձր պաշտօնակախներէն մին ուխտեց որ եթէ յաջողէր այս ինչ ձեռնարկութեան մէջ՝ իւր պալատին աղքատաց բաշխել իւր փղին ծանրութեամբն արձաթ: Փիղք շատ յարգունէին այսպիսի անձանց առջև, և իւրաքանչիւրն իւր պէտքին համար կը պահէր ամենէն ազնիւ և ամենէն մեծ փիղը: Պաշտօնակախն ուխտը, թէ պէտ անապարանօք, սակայն առատապէս պատճառաւ կ'որժէր որ յաջողէր իւր գործը: Չեռնարկութիւնը յաջողեցաւ, բայց պաշտօնակախն, որ կ'ուզէր կատարել իւր ուխտը, բախտեցաւ անակնկալ դժուարութեան մը: Չկար փղին ճիշդ ծանրութիւնը հասկնալու կերպ մը: Երկրին մէջ շինուած չէր բաւական տակուն կշիռ մը որ կշռէր այսպիսի փիթխարի անասուններ: Փիղք չէին ծախուեր կշռով,

և առաջ պէտք զգացուած չէր զայնս կշռելու համար կշիռը թափել շինելու: Իշխանական պալատին մէջ գրանուող բոլոր գիտուն և հանճարեղ մարդիկ ի զուր ջանացին շինել փիթխարի կենդանին կշռելու չափ տակուն գործի մը: Հաւանական կ'երևէր թէ Հնդկաստանի աղքատը զուրկ պիտի մնային այդ արձաթէն: Թերևս պաշտօնակախ այս դժուարութիւնն իւր աչաց առջև ունէր երբ բրաւ իւր ուխտը: Հնդիկք խորամանկ են, և այս բանը թերևս ճարտարութեամբ մը բրաւ նա որպէս զի իրեն լիախուստի ճամբայ մը ըլլար և չբաժնուէր իւր ստակէն:

Բայց եթէ այդպիսի խորհուրդ մը ունեցաւ նա, ի դերև ելաւ իւր յոյսը: Խնդիրը ներկայացաւ Շահճէի, ինչպէս կը ներկայանային բոլոր այսպիսի դժուարին խնդիրներ: Իշխանին երկար տանն պէտք չեղաւ զրանելու համար պարզ լուծում մը: Յայտնի է թէ բանն այդպէս է բոլոր ճշմարիտ տաղանդներուն համար: Անոր գտած լուծումն այնպէս պարզ է և դիւրին՝ որ ամէն ոք կը զօչէ զարմանքով, «Ո՛հ, ի՛նչ դիւրին բան ինչո՞ւ համար մէկը առաջ չբաւ զայդ»: Շահճէ հրամայեց տանիլ փիղը տափակ յատակ ունեցող նաւակի մը մէջ որ կը կենար ջրին եզրը: Երբ կենդանին ապահովագլխէ առնուեցաւ նաւակին մէջ, ըսաւ ծառաներուն որ նաւակին կուշոր, դուրսէն, նշանակեն ճիշդ բարձրութիւնը որում հասած էր ջուրը փղին նաւակին վրայ կոխելուն պատճառաւ: Այնուհետև փիղը գուրս հանուելով քարեր լցուեցան նաւակին մէջ անոր ստեղծ, մինչև այնչափ որ նաւակին կուշար նշանակուած կէտին հասաւ ջուրը:

Յետոյ քարերը կշռուեցան: Եթէ կշիռին թափթեր չկարենային պարունակել բոլոր քարերը մէկ անգամին, ասանք կրնային մասն մասն դրուիլ այսպէս ճշգիւ ստուգուեցաւ փղին ծանրութիւնը: Անտարակոյտ Հնդկաստանի աղքատք ի վերջոյ ընդունեցին արձաթը:

Թէ արդեօք պաշտօնակախը գո՛հ սրտով վճարե՞ց ստակը, պատմութիւնը չըսեր մեզ, բայց կը յուսանք թէ այդպէս բրաւ իւր մարդասէր բնաւորութեան բերմամբ, և սրովհետև կատարեալ մեծցած փղի մը ծանրութիւնը քանի մը տակառայափի կը հասնի, (մէկ տակառայափը հաւասար է իւր 800 քաշի) կը հետևի թէ յիշեալ գաւառին աղքատաց քանի տուած գումարը շատ մեծ էր:



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա՝ ՅԱՌՔ ԳՅՈՒՆՆԵՆ